

բազործելու ձեռնհաս չէ եղել ոչ մէկը Տիրոջ ծառաներից (բայց եթէ նա միայն որ Տէրն էր և ծառայի կոչում յաճն առաւ) և որին սակայն ամէնքը ձգտել պարտաւոր են։ Արք Պետրոս առաքեալը Տիրոջ հարցրեց, թէ արդեօք այդ առաքեալը խօսքերը առաքեալներին էին միայն ուղղուած, թէ բոլոր ժողովրդին—ընդունելով անշուշտ որ այդպիսի մեծ հաւատարմութիւն առ առաւելն միայն Նորա ամենամերձաւոր սպասաւորներից սպասել կարելի էր—Տէրը իւր պատասխանով հասկացնել կամեցաւ, որ Նա արտաքին յարաբերութիւնների վերայ ամենեւին ուշադրութիւն չէ դարձնում, որ Աստուծոյ տանը անտես լինել և իւր ցոյց տուած հաւատարմութեան համար վարձ ստանալ ամէն ոք կարող է։ Այժմ մէկը զգում է, որ իւր վերայ աւելի մեծ պարտականութիւն կայ, հետամուտ թող լինի աւելի մեծ արդիւնք յառաջ բերելու։ Բայց մի որոշ պարտականութիւն ամէնքն ունին, ամէնքը պարտաւոր են Տիրոջ կամքը ճշդիւ կատարել և պատասխանատու կմնան, եթէ զանցառու դնուին։ Արձ և պատիժ այստեղ մարդոց աշխատի մէջ ունեցած դիրքի կամ կոչման համեմատ չէ չափուում, այլ այն դիտակցութեան համեմատ, որ մէկն իւր պարտականութիւնների մասին ունի և այն հաւատարմութեան համեմատ, որով նա վերաբերուել է կեանքի ամէն մի քայլափոխում դէպի իւր ընտանական պարտքերը։

Անէք այնպիսի մի բազդախնդիր ժամանակի մէջ ենք ապրում, երբ հաւատարիմ անտեսութիւնն ու մանրաքնին պարտաճանաչութիւնը մեծ յարգ չունին մարդոց աչքում։ Երիտասարդ սերունդը նպատակին հասնել ձգտում է ոչ թէ տոկուն աշխատանքով իւր կրքերի, իւր ամէն մի շարժման վերայ արթնութեամբ հսկելով և դէպի բարին ուղղելով, այլ արտաքին դիւթական միջոցներով, դադափարական թռիչքներով մի անզամից, առանց նեղութեան, առանց իւր անձը ամենաթեթեւ հաճոյքներից զրկելու։ Եւ եթէ այնչափ հազուադիւս են մեր մէջ խելագէս առա-

քնի անձնաւորութիւններ և հաւանականաբար աւելի հազուադիւս պիտի լինին մօտիկ ապագայում՝ դորա պիտաւոր պատճառներից մէկն անշուշտ զգաստութեան պարտքի զգացման պակասութիւնն է։ Այժմ հմտութիւն և ոչ մի ունակութիւն առանց երկարատեւ աշխատանքի ու փորձերի ձեռք չի բերուում առաքելութիւնն էլ մի ունակութիւն է, որի համար անընդհատ մաքառում պէտք է ներքին վատ բնազդութիւնների դէմ, զգաստութեան գօտին միշտ կապած պահել պէտք է։ Վժուարին է այդ ճանապարհը և փշալից, բայց միակն է, որ դէպի կեանք է տանում միակն է, որ յարգանքի ու պատուոյ արժանի անձնաւորութիւններ է պատրաստում։

Այդպիսի անձնաւորութիւնների պէտքը նոյնքան աւելի մեծ է այժմ, որքան աւելի հուժկու ձայնով դժբաղդ պարագաներ դէպի արթնութիւն և դէպի պարտաճանաչութիւն են հրաւիրում մեզ։ Երգարագատ Տէրը ինչպէս ամէն մի անհատի, այնպէս նաև ընդհանրութեան համար իւրաքանչիւր բոպէ, բոլորովին չակրնկալած ժամուն, յաւիտենական երանութեան կայաններից յայտնուիլ կարող է. քաջագօտի և հաւատարիմ ծառաներ են պէտք, որ ճրագները վառած դիմացն երնեն և կարողանան փութով մի դուռ բանալ Նորա առաջ։ Ահա ուսումնարանական մի նոր տարի է սկսուում։ Երանի՜ նպաստէ նա այդպիսի հաւատարիմների թիւը բազմապատկելու մեր մէջ. ուսուցիչ և աշակերտ պարտաճանաչութեան և զգաստութեան գօտին կապած աշխատեն անսպառ նիւթ ժողովել իրենց ճրագների մէջ, դէպի յաւիտենականութեան դռներն առաջնորդող լուսոյ աղբիւրից։

Կ. Վ.



ՍՈՆՐԲ ԽԱԶԸ.

«Ի՞նչ ուս նշան սեռն և անապակ Աստուծոյ առ մարդիկ սիրոյն... և այնչափ Աստուած դմարդիկ սիրեաց, մինչև զՍրբին իւր Միածին ետ, և յայսմիկ երեւեցաւ սէր նո».

րա ի մեզ, զի զանձն իւր եզ. վասն մեր ... Արդ, որ եզ զանձնն՝ ապարէն սովաւ եզ և ի սմին եզ, և որ ի սմին եզ՝ իոյն տակաւին ի սմա է, և ի սմանէ ոչ երբ! ք մեկնեացի հեռացեալ, ապա յիրաւի Աստուծոյ զօրութիւն է սա ... Այսուհետեւ որ որ հաղորդեացի համբարելով արժանացեալ, ոչ իբրեւ ի լոյ խաչ, այլ իբրեւ ի իոյն ինչն ահա որ զօրութիւն աստ քեռեցեալոյն Աստուծոյ, վասն զի և է իսկ աստ ... — Այսպէս է բացատրում ահա ու խաչի նշանակութիւնը երանելի փիլիսոփայն Դաւիթ իւր անուանի Բարձրացուցէք Ճառով, որ մեր ճառնախորհրդում սահմանուած է խաչկերացի աւագ տօնին կարգացուելու համար: Եւ յիրաւի էյդ մի քանի նախապատմութիւնները շատ գեղեցիկ կերպով ցոյց են տալիս թէ ի՞նչ հիման վերայ է յտալ եկել խաչի պաշտամունքը քրիստոնեայնների մէջ և ինչպէս հետզհետէ այնքան ընդարձակութիւն ստացել:

Գլխաւոր արգելքներից մէկը, որոնց դէմ առաջին քրիստոնեայ քարոզիչները մաքաւել ոտիպուած էին՝ կոապաշտութիւնն էր: Հեթանոս մարդու կրօնական զգացումներն ու իդձերը նիւթական աշխարհի հետ կապուած են և նա մի ընական հակումն ունի իր պաշտած աստուածութիւններին յօշափելի դարձնելու՝ մի որոշ, տեսանելի կերպարանք տալու: Քրիստոնէութիւնն ընդհակառակն, որ սովորեցնում էր թէ «Հոգի է Աստուած, և երկրպագուացն նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանելու՝ պէտք է աշխատէր անտարակոյս հանել պաշտամունքի միջից բոլոր նիւթեղէն բաները և ոչ մի կերպ բռնի չտար իւր հետեւողներին իրենց կուռքերը յիշելու և նախկին նիւթապաշտութեան մէջ ընկնելու: Այս պատճառով և առաջին դարերում քրիստոնեայնները յայտնի կերպով խոյս էին տալիս պատկերների, արձանների գործածութիւնից: Իսկ դորա փոխարէն նոցա մէջ զարգանում է շուտով զանազան գաղափարների համար խորհրդաւոր նշաններ գործածելու սովորութիւնը: Այսպիսի նշաններ են օրգաւը կամ բարի հովիւր գառն ուսին՝ փրկի համար, աղանձին՝ ու Հոգու համար, բայց աւելի հետաքրքրական ձևանշանը, որով արտայայտուում էր քրիստոնէից գրեթէ ամբողջ դաւանութիւնը: Զուկ յունարէն թարգմանուում է պիսք բառով, որ կազմուած է Իդոս (Χριστός Θεός υἱός αἰωνίου) (Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդի փրկիչ) բառերի առաջին տառերից, և ամէն քրիստոնեայ ձկան պատկերը տես-

նելով այդ բառերը պէտք է խելէր՝ ապա ուրեմն և նոցա արտայայտած գաղափարը: Հարկաւ սա մի միջոց էր նաև քրիստոնեաների համար ծածուկ պահելու իրենց դաւանութիւնը հեթանոս հալածիչներին:

Աւելորդ է ասել, որ այդպիսի նշանների առաջինը և ամենախորհրդաւորն ու գործածականը սկզբնական ժամանակներից ի վեր խաչը պէտք է լինէր: Բայց Բարսեղ երեսը խաչ հանելու սովորութիւնը առաքելական աւանդութիւն է համարում և Գ. դարու եկեղեցական հայրերից Կիպրիանոս վկայում է, որ այդ նշանը գործ էր դրուում մկրտութեան միջոցին: Իսկ Տերտուլիան սովորեցնում է քրիստոնէի ամեն մի շարժումն ու գործողութիւնները՝ ամբողջ կեանքը խաչի նշանով նստիւրագործել: Եւ ահա այդ խաչը, որի վերայ Աշխարհի Փրկիչը յաղթել էր աշխարհում տիրապետող չարութեան և մարգկային ազգին փրկութիւն շնորհել, դառնում է նորա հետեւողների համար յաղթութեան և փրկութեան նշան ընդգէմ ամեն տեսակ չարեաց և փորձութիւնների:

Երեսը խաչ հանելու սովորութեան հետ գրեթէ միաժամանակ սկսուում է զանազան նիւթերից պատրաստած խաչերի գործածութիւնը: Դոյն ինքն Տերտուլիանի մի գրուածքից երևում է, որ նորա օրով արգէն գործածական էին այդպիսի խաչեր, հասարակ ձևով, առանց որեւէ պատկերի: Իսկ ոսկերեան իւր մի քարոզի մէջ ասում է, թէ խաչի նշանը ամեն տեղ կարելի է տեսնել՝ տներում, թէ հրապարակներում՝ նաւերի ու բլուրների, դէնքերի և գործիքների վերայ: Կուրծքի վերայ կախած փոքրիկ խաչերը չարից պաշտպանում են կենդանի մարդոց գերեզմանների վերայ պաշտպան նոյնպէս խաչի նշանն է: Խաչի նշանակութիւնը բարձրացնելուն և նորա գործածութիւնը ընդհանրացնելուն շատ է նպաստում մանաւանդ Կոստանդիանոս Բեժի նշանաւոր տեսիլը Մաքսիմիանի դէմ վարած պատերազմի միջոցին (312 թ.), երբ նորան օգի մէջ, մուր մոնող արեւից բարձր մի փայլուն խաչ է երևում՝ «Սովաւ յաղթեցես» մակագրութեամբ, և նա այնուհետեւ խաչի նշանը զրնել է տալիս պատերազմական դրօշակների, իւր սաղաւարտի վերայ և ինքն սյգ. ժամանակուանից սկսած ինչպիսի բազմաթիւ գործադրութիւն է գտել խաչը եկեղեցւոյ մէջ կամ դուրսը՝ դժուար է մի առ մի թուել: Խաչակրաց պատերազմների միջոցին իբրեւ հոգւոր զինուորութեան նշան ծառա-

յիւրով, նա հեռզհետէ պատուոյ նշան դարձաւ եկեղեցական, զինուորական, պետական պաշտօնեաների համար, իսկ Քրիստոսի նկարէն, ձուլածոյ կամ քանդակեալ պատկեր վրան կրող խաչեր յայտնի են Զ. դարից սկսած:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եթէ խաչի պարզ նշանը այսքան յարգի էր քրիստոնեաների մէջ, աւելի մեծ ուշադրութեան պիտի արժանանար և պաշտելի լինէր նոյն այն իսկական խաչափայտը, որի վերայ բռնուած էր Փրկիչը և որ նորանից մնացած միակ նիւթեղէն յիշատակն էր աշխարհի, վերայ: Խաչի գիւտի մասին երկու աւանդութիւններ կան. մին ընծայում է այդ փառքը կողոպտող կայսեր կողմ, որ իբր քրիստոնէութիւն է ընդունել Պետրոս առաքելի քարոզութեամբ. իսկ միւսը, որ աւելի յայտնի է և ընդհանրացած, նոյնը վերագրում է կոստանդին կայսեր մօր Հեղինէին: Կոստանդինի ժամանակակից և նորա կենսագրութիւնը գրող Եւսեբիոս Կեսարացին, որ մանրամասն նկարագրել է Հեղինէի երուսաղէմ գնալը և այնտեղ Զիթենեաց սարի վերայ ու Բեթղէմէմում եկեղեցիներ շինելը, ապա Տիրոջ գերեզմանը փորել գտնել տալը՝ այս աւանդութեան մասին ոչինչ չէ յիշում: Կիւրեղ երուսաղէմացու վաւերական ճանաչուած գրուածների մէջ ևս այս մասին յիշատակութիւն չկայ, բայց նա պատմում է, որ խաչափայտի կտորները արգէն այդ ժամանակ ամբողջ աշխարհում տարածուած էին, և գորանից կարելի է եզրակացնել, թէ խաչի գիւտը գուցէ աւելի վաղ էր տեղի ունեցել քան աւանդութիւնն է պատմում: Յամենայն գէպս Գ. դարու վերջին այս աւանդութիւնը յայտնի էր բոլոր եկեղեցական հոյրերին և նոքա ամենքը, սակաւ տարբերութիւններով, մօտաւորապէս այս կերպ են պատմում:—Երբ կոստանդին կայսրը օրոշեց Կոնստանդինոպոլիսի վերայ եկեղեցի կառուցանել, նորա մայր Հեղինէն, որ արգէն երուսաղէմում էր գտնուում (326 թ.), առանձին ջանք գործ պէտք է դնէր Մակար եպիսկոպոսի հետ, որունելու Քրիստոսի խաչելութեան տեղը. որովհետեւ Չ. դար առաջ Աբրիանոս կայսրը հեթանոսական տաճար և սիւներ է կանգնել տուել այդտեղ: Փորելով կարելի եղաւ գտնել վերջապէս այն այրը, որի մէջ Տիրոջ գերեզմանն էր, և քիչ հեռու նորանից Յ. փայտեայ խաչերի բռնուները, մինչև իսկ այն տախտակը, որի վերայ գրուած էր Տիրոջ գաւազարտութեան վճիռը, բաժան խաչից: Այդ տախ-

տակը ամենից աւելի յարմար էր գալիս խաչերից մէկին. բայց որպէս զի ոչ մի կառուած չմնայ Տիրոջ խաչափայտի իսկութեան մասին: Մակար եպիսկոպոսը կայսրուհու և ժողովրդեան ներկայութեամբ պատուիրում է մի մահամերձ աղնուական կրնով շօշափել գտնուած երեք խաչերը, և մինչդեռ երկուսը նոցանից ոչ մի ազդեցութիւն չեն թողնում՝ երրորդին գիպելուն պէս հիւանդ կիւր եղնում կանգնում է բոլորովին առողջակաւ: Այսպէս հրաշքով գրտնուած խաչափայտի մի մասը Հեղինէն ուղարկում է Կոստանդինոսին բռնուների հետ, որ նա ամրացնում է իւր սաղաւարտի և ձիու սանձի վերայ. իսկ միւս մասը արժաթի մէջ պատելով՝ յանձնում է Մակար եպիսկոպոսին, որ պահէ երուսաղէմի մայր եկեղեցւոյ մէջ: Այնուհետև իւրաքանչիւր տարի զատիկի տօնին երկրպագութեան համար եպիսկոպոսը հանում էր այդ խաչը ժողովուրդի առաջ, մինչ ուրիշ անգամներ երբեմն միայն շատ հեռու տեղերից յատկապէս ս. խաչը տեսնելու համար եկած ուխտաւորներին էր նա ցոյց տրուում: Եպիսկոպոսը իրաւունք ունէր նաև խաչափայտի մանր կտորներ բաշխել ջերմեռանդ ուխտաւորներին, և մի առանձին հրաշք էր համարում այն հանգամանքը, որ չնայելով այդպիսի կտորների մեծ քանակութեամբ դուրս տրուելուն՝ խաչը մնում էր միշտ ամբողջ:—Նիկիոյի պատմելով նայն իսկ Հեղինէի ներկայութեամբ սահմանուել է երուսաղէմում տօնել Գիւտ խաչի տօնը, որ և հեռզհետէ ընդունելութիւն է գտել զանազան եկեղեցիներում:


Թէ երբ և ինչպէս է յառաջ եկել յաշվերացի տօնը՝ այդ մասին պակասում են ըստոյգ պատմական տեղեկութիւններ: Ըստ ոմանց այդ տօնը սկսուել է Կոստանդինոսի նշանաւոր տեօնից յետոյ. ըստ այլոց, որ աւելի տարածուած աւանդութիւնն է, իւր սկիզբն ու անունը առել է նա գերեզմանի կամ ս. Յարութեան տաճարն օրհնելու միջոցին, որ տեղի ունեցաւ 335 թ. -ի սեպտեմբեր 14-ին: Յամենայն գէպս յայտնի է, որ է. դարում, Հերակլ կայսեր արշաւանքից յետոյ, խաչվերացի տօնը ամեն տեղ կատարուում էր, ուստի և աւելի հաւանական են համարում այն եզրակացութիւնը, թէ նորա ծագումը կապ պէտք է ունենայ նոյն իսկ այդ արշաւանքի հետ:—Պարսից խոսքով Բ. թագաւորը 614—615 թ. -ին երուսաղէմը նուաճելուց ու այրելուց յետոյ, գերի տա-

բաւ նորա բնակիչներէն մի մասը որոնց մէջ գտնուում էր Զարբաթա պատրիարքը և նորա հետ մէկ տեղ Քրիստոսի խաչափայտը մի տապանակի մէջ կնքած: Հերակլ կայսրը կրկին յաղթելով պարսից 628 թ. -ին, նոցա հետ կապած գաշինքի մէջ նաև այն պայմանը դրաւ, որ յետ դարձնեն իրեն գերի տարած խաչափայտը: Բոլորովին անվնաս ստանալով այդ թանկագին սրբութիւնը՝ նա 631 թ. -ին անձամբ յաղթական կառքի մէջ ծընկալոր բռնած՝ Երուսաղէմ՝ բերաւ և սեփական ուսերի վերայ մեծ հանգիսիւ Գողգոթայի գլուխը բարձրացնելով՝ դրաւ «վերացրեց» կրկին ս. Յարութեան վերանորոգուած տաճարի մէջ՝ ի տես բոլոր քրիստոնեաների: Բնական է, որ այսպիսի մի հանդէս մեծ տպաւորութիւն գործէր հեռու և մօտիկ հաւատացեալների վերայ և ցանկութիւն յառաջ բերէր պահելու նորա յիշատակը՝ ամեն տարի կրկնուող տօնախմբութեամբ:

Պէտք է ենթադրել, որ Հերակլ կայսեր այսպէս յաղթանակաւ խաչը գերութիւնից ետ բերելը շատ մեծ ազդեցութիւն է թողել արեւելեան քրիստոնեաների, ի թիւս որոց և հայերի վերայ և նոցա մէջ մեծ հաւատ յառաջ բերել գէպի ս. խաչի զօրութիւնը: Խաչապաշտ ժողովուրդները, գոնէ հագեալէս միացած՝ կոխ էին մղել այստեղ անհաւատների դէմ և ս. խաչը նոցա կարողութիւն էր շնորհել փառաւոր յաղթութիւն տանելու, բոլոր քրիստոնեաներին հասած անարդանքը մէջ տեղից վերցնելու: Ի՞նչ զարմանք, որ նոքա այնուհետև կրկնապատիկ ջերմեանդութեամբ պէտք է վերաբերուէին գէպի այն ամենը, ինչ որ խաչի հետ կապ ունէր: Թոներ սահմանէին, տաճարներ շինէին, խոսական խաչափայտի մի մասը, կամ նորա թանկագին նիւթերից պատրաստած օրինակը ձեռք բերել աշխատէին: Այս նոյն տարում է նաև, որ հաստատուել է Վարազայ ս. Խաչի ուխտը և Թոնը, Թաթիկ ճրգնաւորի տեղեան համաձայն և Ներսէս Գ. Շի. նոյն հայրապետի անօրէնութեամբ: Իսկ ի՞նչ ինչպիսի երախտագիտութեամբ են վերաբերուել մեր հայրերը գէպի Հերակլի սիրապորձութիւնը, այդ երևում է նաև նորոշից, որ մեր պատմիչները միշտ պատկառանքով ու գովանանքով են խոսում՝ նորա մասին, շնորհելով որ նոյն Հերակլն էր Եզր կաթողիկոսին ստիպել Յսնայ եկեղեցու հետ միութիւն հաստատելու և իւր այդ չարաբատտիկ յանձնառութեամբ ուրացողի վաստանը ժառանգելու պատմութեան մէջ: Առհասարակ

ինչքան մեր ունեցած ծանօթութիւնները ցոյց են տալիս՝ մեր եկեղեցու մէջ առանձնապէս յարգել է եղել խաչի անունն ու պաշտօնը, մինչդեռ գէպի որոց պատկերները մեր նախնիք միշտ զգուշութեամբ են վերաբերուել և մի ժամանակ մինչև իսկ չափազանցութեան հասած պատկերապաշտութիւնը յունական սովորութիւն համարելով՝ կրօնի են վարել նորա դէմ: Այսպէս օրինակ Կիրակոս Գանձակեցու և Երեմիայի վկայութեան համաձայն՝ Վահան կաթողիկոսը (998—970 թ.) նորա համար գահընկեց եղաւ և քանադրուեցաւ, որ եկեղեցիների մէջ իկոններ մոցնելով՝ քաղկեդոնականութիւն տարածել էր կամենում: Միայն Թոնդրակեցի աղանդաւորներն են եղել, որ պատկերների հետ մէկտեղ մերժել և անարգել են նա և ս. խաչի պաշտամունքը: «Զարմանալի էլ չէ, որ բազմաշարժար անարգանքի ու հեծութեան խաչը գարեհի ընթացքում ամենայն հաւատարմութեամբ կրող հայ ժողովուրդը առանձին ջերմեանդութիւն տածէր գէպի այն նշանը, որի անունով կրում էր այդ ամենը և որի Տիրութիւնը փրկութիւն էր սպասում:

Բարկէն.



ՎԵԻՏԱՐԱՆԱԿԱՆ — ՀԱՄԱՅՆԱԿԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎԸ:

Էքֆուրտում 1895 յունիս 4—6 -ին (Մայիս 23—25):

Ընթերցողներ այս տարուայ համաժողովը առանձնապէս հետաքրքիր էին դարձնում որոնց յիշատակութեամբ և կրաւականը այս անգամ — Երգեն նախորդ յօդուածի մէջ յիշուեցաւ, որ համաժողովի գործն անդամները սկզբից և եւթ 2 տարբեր սերունդ էին ներկայացնում: Նախկին «քրիստոնեայ» — համայնական կուսակցութեան հետեւող պահպանողական ծերերը և մի նոր հոսանք յառաջ բերել ձգտող յառաջագէտ երիտասարդները: Աերջին տարուայ ընթացքում մի քանի հանգամանքների շնորհիւ այդ տարբերութիւնը աւելի զգալի էր դարձել և շատերը երկիւղ էին կրում, որ նա պատճառ կլինի պատակաւ ձգելու համաժողովի մէջ, Երիտասարդների պարագլուխներից մէկը՝ պատտոր Նաւումանի Hilfe (օգնութիւն) անունով մի թերթ էր սկսել հրատարակել, որի գէմ շատ յարձակումներ եղան, իրրեւ սոցիալ-գէմկրատիքական դադափարներ

* Տես Արիստակէս Լաստիվերտի, Պատմութիւն Գլուխ ԴԳ և ԳԲ: Մագիստրոսի Թղթերը:

* Տես Արարատ: Օգոստոս 1895, նր. 274—282: